ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-24/6

ք. Երևան 10.07. 2024թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Անտոնյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Օն Դիզայն>> ՍՊԸ-ն, (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Վ. Իսպիրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Արթուր Աբրահամի անվան մանկապատանեկան մարզահամլիրի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

ա. շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

բ. ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

գ. ներկայացնել աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

դ. պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում (որի հաշվարկը սկսվում է քաղաքաշինական պարզ և համալիր փորձաքննությունների դրական եզրակացությունների առկայության դեպքում) Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 30 780 000 (երեսուն միլիոն յոթ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 30%-ի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել է Կատարողին բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում: Կանխավճարը տրամադրվում է պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի Պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով

(հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա նախավերջին աշխատանքային օրը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ

և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկ ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում երաշխիքի ձևով ներկայացրած ապահովման ժամկետի երկարաձգումը հավաստող փաստաթղթի առկայությամբ), բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Պայմանագրի վավերապայմաններում Կատարողի կողմից նշված բանկային տվյալները պետք է համապատասխանեն միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով պայմանագրի և/կամ որակավորման ապահովումների և դրանց կից վճարման պահանջագրերի բանկային տվյալներին:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված են ֆինանսական միջոցներ, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Օն Դիզայն>> ՍՊԸ
ք. Երևան, հանրապետության հրապարակ	ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր 0910
կառավարական տուն 3	/Շ/10/18
ՀՀ ֆինանսների նախարարության	<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 1570036435720100
Հ/Հ 900011041770	ՀՎՀՀ 04429615
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղարի	Տնօրեն՝
Պարտականությունները կատարող՝	
_____ Կ. Անտոնյան	_____ Վ. Իսպիրյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
10. 07. 2024 թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-24/6 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
					հասցեն	ժամկետը**
1	71241200/86	ՀՀ դրամ	30 780 000	1	ք. Երևան	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից՝ 180 օրացուցային օր

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Նկարագիրը	Արթուր Աբրահամի անվան մանկապատանեկան մարզահամալիրի կառուցման ծրագիր
Համառոտ նկարագիրը (փաստացի վիճակը), տեղակայման վայրը	Մարզահամալրի շենքը տեղակայվելու է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.22032022-01-0065 վկայականում ամրագրված հողամասի սահմաններում: Հողամասի չափերը՝ 0,374813 հա, 0,0312 հա, 0,0422 հա Տարածքը գտնվում է քաղաք Երևան, Շենգավիթ վարչական շրջան , Ներքին Չարբախ 3-րդ փողոց 31/13 հասցեում Տարածքում ներկայումս առկա են 60,1 քմ մակերեսով ինքնակամ շինություններ, չկառուցապատված ազատ տարածք, ասֆալտապատ ճանապարհ:
Կատարման ենթակա (նախատեսվող) աշխատանքների համառոտ բնութագիրը	Նախատեսվում է ուսումնասիրել հողատարածքը և ձեռք բերել՝ • ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացությունների և տեխնիկական պայմաններ, ընդ որում ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունները պետք է իրականացվեն հորատման միջոցով՝ համաձայն գործող կարգերի և գրունտների լաբորատոր փորձարկման մեթոդով, • տարածքի գեոդեզիական հանույթ, • արտաքին հաղորդակցուղիների տեխնիկական վիճակի ուսումնասիրության եզրակացություն(-ներ), Նախագծային լուծումների շրջանակներում՝ • Նախատեսվում է մշակել 6000քմ ընդհանուր մակերեսով մանկապատանեկան մարզահամալիր, երկաթբետոնե կոնստրուկտիվ լուծումներով, նախագծանախահաշվային փաստաթղթեր, կազմված՝ Հիմնական մասնաշենքից (մասնաշենքերից)՝ – նկուղային կամ կիսանկուղային ավտոկայանատեղի – բասկետբոլի ուսումնական դահլիճ (տրիբունա՝ 215 նստատեղ) ≈ 600 քմ – ըմբշամարտի ուսումնական դահլիճ՝ ≈ 450 քմ – բոքսի ուսումնական դահլիճ՝ ≈ 450 քմ – երկու ունիվերսալ մարզադահլիճ՝ ընդհանուր մակերես ≈ 300 քմ – յուրաքնչյուր դահլիճին կից հանդերձարաններ և ցնցուղարաններ ըմբշամարտի և բոքսի դահլիճներին կից շոգեբաղնիք(ներ) և մերսման սրահներ – ընդունարան – սպասասրահ – բուժկետ – սանհանգույցներ (մարզիկների, սպասարկող անձնակազմի և այցելուների համար) – մարզական գույքի և այլ պահեստային սենքեր – վարչական մաս – մարզիչների աշխատասենյակներ – այլ ենթակառուցվածքներ • ըստ անհրաժեշտության գոյություն ունեցող շինությունների քանդման նախագիծ • նախագծով նախատեսել ներքին ինժեներական ենթակառուցվածքների /սառը և տաք ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման, էլեկրամատակարարման, օդափոխության և օդորակման, սառնամատակարարման՝ ըստ պահանջի, հակահրդեհային ազդանշանման,

	հրդեհաշիջման, տեսահսկման, գազամատակարարման կապի, անվտանգության համակարգերի, ջրահեռացման, հողանցման/ համակարգերի կառուցում, շենքի արդիական ներքին հարդարում, • Նախագծով նախատեսել շենքի համալրում հենաշարժային համակարգի խախտումներ և հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի տեղաշարժն ապահովող անհրաժեշտ նախագծային լուծումներով և սարք-սարքավորումներով (թեքահարթակներ, առանձնացված սանհանգույցներ՝ համապատասխան ինվենտարով, բազրիքներ, լրացուցիչ լուսավորություն, ըստ անհրաժեշտության վերելակ կամ վերհան սարք. • Նախագծով նախատեսել տարածքի բարեկարգում, ասֆալտապատում, կանաչապատման, լուսավորություն, ըստ անհրաժեշտության (եթե մասնագիտական եզրակացությամբ դրանք ենթակա կլինեն) արտաքին հաղորդակցուղիների կառուցման, քանդման կամ վերակառուցման և այլն, էներգետիկ նշանակության շինություններ (բաշխիչ կայաններ, ենթակայաններ, գազամատակարարման, ջրամատակարման, կոյուղու, ջրահեռացման ապահովման սարքեր-սարքավորումներ) ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների՝ ծրագրի շրջանակներում անհրաժեշտ տարածքի ընդգրկումով, • Նախագծում նախատեսել այլընտրանքային էներգիայի օգտագործման հնարավոր միջոցներ (արևային ջրատաքացուցիչներ և ֆոտովոլտային պանելներ)՝ օբյեկտում տաք ջրամատակարարում և էլեկտրամատակարարում ապահովելու համար • Նախագծման ընթացիկ աշխատանքները աշխատանքային կարգով համաձայնեցնել պատվիրատուի հետ՝ միաժամանակ ապահովելով նորմատիվ պարտադիր պահանջները (այդ թվում հաշմանդամների տեղաշարժի համար մատչելի պայմանների ապահովման) և օգտագործելով արդի մոտեցումներ, ծագած բոլոր հարցերը քննարկելով պատվիրատուի հետ: • Նախագծի վերաբերյալ այլ մանրամասնությունները և պահանջները կներկայացվեն պատվիրատուի կողմից նախագծի էսքիզային տարբերակի քննարկման ժամանակ: • Մանրամասն կահավորման նախագիծ (կահավորանքի մանրամասն բնութագրերով և մոդելավորմամբ, որը պետք է ներառված լինի նախահաշվում) Նախատեսվում է մշակել նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ հետևյալ կազմով. • Արթուր Աբրահամի անվան մանկապատանեկան մարզահամլիրի կառուցման նախագիծ • Անհրաժեշտ ենթակառուցվածքների կառուցման նախագիծ • Բարեկարգման և կանաչապատման նախագիծ • Ըստ անհրաժեշտության գոյություն ունեցող շինությունների քանդման նախագիծ
Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ	Հիմնավորում՝ – ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի համար N 2323-Ն ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին որոշում: Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝ - ճարտարապետահատակագծային առաջադրանքը և տեխնիկական պայմաններ (կտրամադրվի պատվիրատուի կողմից), - նախագծային առաջադրանք (կազմվում է ընտրված Նախագծողի և Պատվիրատուի համատեղ մասնակցությամբ և հաստատմամբ), - հողհատկացման հիմքեր - ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացություն(ներ), - արտաքին ինժեներական հաղորդակցուղիների (ջրամատակարարում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում) տեխնիկական վիճակի եզրակացություն - երկրաբանական հանույթ, - ոլորտային (շահագրգիռ) մարմինների եզրակացություններ՝ եթե այդպիսիք անհրաժեշտ են (շրջակա միջավայր, կրթություն, մշակույթ և սպորտ, արտակարգ իրավիճակներ, առողջապահություն և այլն): Նախագծի մշակում ըստ նորմատիվային պահանջների՝ • «Քաղաքաշինության մասին» օրենք • «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենք • «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենք • ՀՀ քաղաքաշինության նախարարի 2003 թվականի մայիսի 13-ի «ՀՀՇՆ IV-11.03-03-02 (ՄՍՆ 2.02-05-2000) «Ավտոկայանատեղեր» շինարարական նորմերը հաստատելու մասին» N 28-Ն հրաման

	• ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀՀՇՆ 20-04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N 24-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 102-Ն հրաման, • ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի ՀՀՇՆ 31-03- «Հասարակական շենքեր և շինություններ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին> N 95-Ն հրաման, • ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի «ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի հաստատման մասին» N 253-Ն հրաման, • ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի «ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում» շինարարական հորմերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու և մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 56-Ն հրաման, • ՀՀ քաղաքաշինության նախարարի 2004 թվականի օգոստոսի 4-ի «ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում» շինարարական նորմերը հաստատելու մասին» N 83-Ն հրաման, • ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի «ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 78-Ն հրաման • ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի «ՀՀՇՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 80-Ն հրաման, • ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՀՇՆ 40-01.02- «Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 01.10.2001թ N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 103-Ն հրաման, • ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին» N 1504-Ն որոշում, • ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման Կարգի 33-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներ • ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի <Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին> N596-Ն որոշում • ՀՀ կառավարության 13.12.2007թ <ՀՀ պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները հաստատելու և ՀՀ կառավարության 14.06.2001թ N 532 և 03.05.2001թ որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին> N 1490-Ն որոշում, • *ՀՀՇՆ 52-01-2021-«Բետոնե եվ երկաթբետոնե կոնստրուկցիաներ»* • *ՀՀՇՆ 53-01-2020-«Պողպատե կոնստրուկցիաներ»* • ՀՀ կառավարության 16.02.2006թ թիվ 392-Ն որոշում «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին» և այլն (պարտադիր այլ նորմատիվա-տեխնիկական փաստաթղթեր)
Նախագծման փուլերը	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ N128-Ն հրամանի համաձայն

	Նախագծային աշխատանքների իրականացում «Աշխատանքային Նախագիծ» 1 (մեկ) փուլով
Նախագծի կազմը	«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ» Նախագծի լրակազմում ընդգրկվող (մշակվող) փաստաթղթեր 1. Ընդհանուր բացատրագիր 2. Հողամասի հատակագծային կազմակերպման ուրվագիծ (կամ հողամասի գլխավոր հատակագիծ) 3. Ճարտարապետաշինարարական մաս - Ծավալահատակագծային լուծումներ, ճակատներ, կտրվածքներ, առաստաղների արտացոլված հատակագծեր, մասնագրեր և մանրամասն հանգույցներ /այդ թվում շենքերի կահավորման հատակագիծ/ - Եռաչափ մոդելավորում - Մանրամասն կահավորման նախագիծ (կահավորանքի մանրամասն բնութագրերով և մոդելավորմամբ) 4. Կոնստրուկտիվ մաս - Կոնստրուկտիվ լուծումներ, - կոնստրուկտորական հաշվարկների հաշվետվություն 5. Ինժեներական (ներքին) լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր՝ այդ թվում մասնագրեր) - սառը և տաք ջրամատակարարման, կոյուղու, ջրահեռացման, հրդեհաշիջման, ջեռուցման, էլեկրամատակարարման, հողանցման, օդափոխության, օդորակման, սառնամատակարարման՝ ըստ պահանջի, տեսահսկման, գազամատակարարման, հակահրդեհային ազդանշանման, կապի և անվտանգության համակարգերի և այլն, - Ինժեներական մասերի հզորությունների հաշվարկների հաշվետվություն 6. Արևային ջրատաքացման համակարգի նախագիծ 7. Ֆոտովոլտային համակարգի նախագիծ 8. Շինմոնտաժային աշխատանքների նախահաշիվ 9. Ծավալաթերթ-նախահաշիվ (միվոր գներով) / երկլեզու՝ հայերեն-ռուսերեն տարբերակները առանձնացված/ 10. Շինարարության կազմակերպման նախագիծ 11. Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ 12. Հաշմանդամների համար մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ 13. Էներգախնայողությանն և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ: 14. Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ (ինժեներատեխնիկական անվտանգություն, վտանգավոր արդյունաբերական օբյեկտների անվտանգության միջոցառումներ, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցառումներ 15. Նախագծով նախատեսված նյութերի և սարքավորումների երաշիքային ժամկետների ցանկ 16. Ինտերիերի դիզային ընդհանուր տարածքների, բոլոր տիպային սենյակների ներառմամբ՝ գունային լուծումներով, ներառյալ կահավորման նախագծերը ու կահույքի դիզայնի աշխատանքները, ընդ որում ներկայացնելով կահավորանքի մանրամսն տեխնիկական բնութագրեր և գունային լուծումներ /3D պատկերների ներկայացում բարձր որոակի կատարման ու ներկայացման ապահանջով/: Համաձայնեցումներ *Նախագծի համաձայնեցում* 1. Երևանի քաղաքապետարան, 2. ՀՀ ԿԳՄՍ նախարարություն 3. ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին, 4. ՀՀ առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին, 5. ՀՀ Քաղաքաշինության կոմիտե
Այլ պահանջներ	*Եզրակացություններ* Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում

- Նախագծողի կողմից ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացությունների և տեխնիկական պայմանների ձեռքբերում, ընդ որում ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունները պետք է իրականացվեն հորատման միջոցով՝ համաձայն գործող կարգերի և գրունտների լաբորատոր փորձարկման միջոցով
- Նախագծողի կողմից արտաքին հաղորդակցուղիների տեխնիկական վիճակի ուսումնասիրություն եզրակացությունների ձեռքբերում և հատակագծային լուծումների ընտրության տեխնիկատնտեսական հիմնավորում
- Նախագծում վերելակներ և կաթսայատներ նախատեսելու դեպքում՝ արտադրական վտանգավոր օբյեկտների նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացությունների ձեռքբերում նախագծողի կողմից
- Նախագծողի կողմից շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) եզրակացության ձեռքբերում (դրա անհրաժեշտության դեպքում):

Փորձաքննություններ

- Որպես բարձր ռիսկայնության (IV կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտ քաղաքաշինական պարզ և համալիր փորձաքննության եզրակացության ձեռքբերում՝ (պատվիրատուի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի) կողմից
- շրջակա միջավայրի վրա ազդեցությունների փորձաքննության ապահովում /համաձայն ՀՀ օրենսդրության/ նախագծող ընկերության միջոցներով և կողմից /նախագծման աշխատանքներին զուգահեռ/ (դրա անհրաժեշտության դեպքում):

Շինարարական նյութերի, պատրաստվածքների (շահագործման) նկատմամբ պահանջներ

- նյութերի, պատրաստվածքների շահագործման առավելագույն ժամկետ
- նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված նյութերի, պատրաստվածքների ցանկ
- էներգաարդյունավետություն ապահովող միջոցառումների, սարքավորումների և նյութերի ցանկ

Նախագծում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում-բնութագրում՝ նախագծի մասնագրերում և նախահաշվում՝ նշելով տվյալ ապրանքը բնութագրող հիմնական տեխնիկական ցուցանիշները,

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում,
Ջերմամեկուսիչ նյութեր՝ բազալտի հումքով մանրաթելային հանքաբամբակե սալերով,

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱԿԱԶՄ

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով:

- Նախագծային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի/ փաստաթղթային ամբողջական փաթեթի ներկայացում՝ <u>6 օրինակ երկլեզու/առանձին կամ համատեղված հայերեն և ռուսերեն/</u>
- <u>Նախահաշվի և ծավալաթերթի/առանց միավոր արժեքների/ փաստաթղթերի ամբողջական փաթեթի ներկայացում՝ համապատասխանաբար 3 և 1 օրինակ:</u>
  Ընդ որում ծավալաթերթը ներկայացնել երկլեզու /առանձին հայերեն և առանձին ռուսերեն/
- Նախագծանախահաշվային երկլեզու փաստաթղթերի էլեկտրոնային փաթեթի ներկայացում՝ 6 օրինակ DVD կրիչով, տեքստային և գծագրական նյութերը՝ CAD և PDF ֆորմատներով, նախահաշիվը և ծավալաթերթը՝ EXCEL տարբերակներով

*Էլեկտրոնային կրիչում ներառվող ֆայլերը պետք է ունենան պարունակությանը համարժեք անվանումներ, և զերծ լինեն կողմնակի ինֆորմացիայից:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ (ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ)

Աշխատանքների կատարման ժամանակահատվածը նախատեսել պայմանագիրն (համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից՝ 180 օրացուցային օր, որից հետո ՆՆՓ-ն Պատվիրատուի նախաձեռնությամբ կներկայացվի պարզ և համալիր քաղաքաշինական փորձաքննության:

<u>ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՈՒՄ</u>

Ըստ անհրաժեշտության, եթե

	1. պատվիրատուի նախաձեռնությամբ իրականացվող քաղաքաշինական *պարզ փորձաքննության արդյունքներով տրվել է եզրակացություն, հետևյալ ձևակերպմամբ «Նախագիծը վերադարձվում է լրամշակման»*, նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում: 2. պատվիրատուի նախաձեռնությամբ իրականացվող համալիր փորձաքննության գործընթացի արդյունքներով, եթե տրվում է բացասական եզրակացություն կամ դրական եզրակացություն՝ պայմանով, որ անհրաժեշտ է կատարել որոշակի լրամշակում, նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում: <u>ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ</u> Նախագծային աշխատանքների ֆինանսավորումը կկատարվի քաղաքաշինական պարզ փորձաքննության դրական գրավոր եզրակացությունը, համալիր փորձաքննության դրական եզրակացությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011041770
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղարի
Պարտականությունները կատարող՝

_____ Կ. Անտոնյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<Օն Դիզայն>> ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր 0910
/Շ/10/18
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570036435720100
ՀՎՀՀ 04429615

Տնօրեն՝

_____ Վ. Իսպիրյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1.1
10. 07. 2024 թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-24/6 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

հ/հ	ՆՆՓ մշակման աշխատանքի գործընթացները և փուլերը	Շաբաթների քանակը (ընդամենը 180 օրացուցային օր)																									
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	5 օր
1	Էսքիզային նախագծի վերջնական տարբերակի մշակում և համաձայնեցում պատվիրատուի հետ																										
2	Նախագծման առաջադրանքի հիման վրա շենքերի ծավալահատակագծային մանրամասն լուծումների (իրականացում և համաձայնեցում պատվիրատուի հետ																										
3	Ներքին ինժեներական ենթակառուցվածքների նախագծային լուծումների մշակում և համաձայնեցում պատվիրատուի հետ																										
4	Աշխատանքային նախագծի լրակազմի մշակում և համաձայնեցում պատվիրատուի հետ																										
5	Մշակված նախագծի հիման վրա նախահաշվի կազմում																										

6	Համաձայնեցում շահագրգիռ մարմինների հետ և անհրաժեշտ եզրակացությունների ստացում																									

*Ներկայացված աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկի այլ առաջարկ ունենալու պարագայում, մասնակիցը, հայտի ներկայացման փուլում, ներկայացնում է նոր օրացուցային գրաֆիկ՝ փոփոխելով միայն առանձին տեսակի աշխատանքների կատարման ժամկետները՝ պահպանելով բոլոր աշխատանքների կատարման համար սահմանված ընդհանուր տևողությունը: Օրացուցային գրաֆիկը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011041770
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղարի
Պարտականությունները կատարող՝

_____ Կ. Անտոնյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<Օն Դիզայն>> ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր 0910
/Շ/10/18
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570036435720100
ՀՎՀՀ 04429615

Տնօրեն՝

---------- Վ. Իսպիրյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
10.07 . 2024 թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-24/6 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության														
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/86	Արթուր Աբրահամի անվան մանկապատանեկան մարզահամլիրի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայություն	-	-	-	-	-	-	-	-	-	30 780 000	30 780 000	30 780 000	30 780 000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011041770
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղարի
Պարտականությունները կատարող՝

_____ Կ. Անտոնյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<Օն Դիզայն>> ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր 0910
/Շ/10/18
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570036435720100
ՀՎՀՀ 04429615

Տնօրեն՝

_____ Վ. Իսպիրյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
10.07 . 2024 թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-24/6 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

«ՕՆ ԴԻԶԱՅՆ»
"ОН ДИЗАЙН"
"ON DESIGN"
04429615

Հավելված 3.1
10. 07. 2024 թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-24/6 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

«ՕՆ ԴԻԶԱՅՆ»
"ОН ДИЗАЙН"
"ON DESIGN"
04429615

AMERIABANK

08.07.2024թ.
O.AB.100.12CIB.PIED.0.12106.24

Բենեֆիցիար՝
Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.12106.24
(ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից ՀՀՔԿ-ՀՄԱԽՃՁԲ-24/6 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՕՆ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից կնքվելիք թիվ ՀՀՔԿ-ՀՄԱԽՃՁԲ-24/6 պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել մինչև 4,860,000.00 (չորս միլիոն ութ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի թիվ 900008000664 գանձապետական հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար նախատեսված վերջնաժամկետին հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում Երաշխիքը կարող է գործել ոչ ավելի երկար, քան մինչև 01 հուլիսի 2025թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած: Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված Պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (tender1@minurban.am):

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ՀՄԱԽՃՁԲ-24/6 Պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար՝
Սուրեն Քոչարյան

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
+374 10 56 11 11
+374 12 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

#bankaboutyou

AMERIABANK

08.07.2024թ.
O.AB.100.12CIB.PIED.0.12107.24

Բենեֆիցիար՝
Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.12107.24
(ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ՕՆ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև կնքվելիք թիվ ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-24/6 պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել մինչև 3,240,000.00 (երեք միլիոն երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի թիվ 900008000664 գանձապետական հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար նախատեսված վերջնաժամկետին հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում Երաշխիքը կարող է գործել ոչ ավելի երկար, քան մինչև 01 հուլիսի 2025թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած: Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված Պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (tender1@minurban.am):

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

6.1) թիվ ՀՀՔԿ-ՀՄԱԽԾՁԲ-24/6 Պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

6.2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

8.1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

8.2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար՝
Սուրեն Քոչարյան

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
+374 10 56 11 11
+374 12 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

#bankaboutyou